

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ՈՐՊԷՍ ՄԻ- ՋՈՑ ՄԱՏԱՂ ՍԵՐՆԴԻ ՖԻԶԻԲԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

Պատմ. Տեսութիւնն Օ. Վ. Կրիժանովսկու:

(Նախա-նախ-խի-ն)

5) Ըմբռամարտել ($\pi\acute{\alpha}\lambda\lambda\eta$): Սա յունական մարմնամարզու-
թեան ամենակարևոր մասն էր, կատարուում էր յայտնի, ճշտու-
թեամբ որոշուած կանոններով և բաժանուում էր երկու տեսակի.
— ուղիղ ($\acute{o}\rho\theta\eta$), որ կանգնած էր լինում, և սլառկած, որ պառ-
կում և այնպէս էին ըմբշամարտում. յաղթողը նա էր համար-
ւում, որը իւր հակառակորդին երեք անգամ դետին կղլորէր:
Մարմնամարզութեան բոլոր հինգ տեսակները կազմում էին այս-
պէս կոչուած՝ $\pi\acute{\epsilon}\nu\tau\alpha\lambda\lambda\omicron\nu$ —հնգապալքար, և եթէ կատարուում էին
ոչ թէ դիմնաղիաներում, այլ հրապարակական խաղերի ժամա-
նակ՝ վերջիններեց միայն մի համարն էին սարքում: Հրապա-
րակական խաղերի ժամանակ դործադրուում էր և մի այլ տե-
սակ պայքար—մուշտակուիւ, և այսպէս ասած՝ $\pi\alpha\nu\chi\rho\acute{\alpha}\sigma\iota\nu$
(պանկրատիոն) — մի տեսակ խառնուրդ մուշտակուիւ և հա-
տարակ ըմբշամարտի, որ պահանջում էր որոշ ճարպկութիւն
և մկանների լարումն. մրցում էին նաև երկանիւ կառքերով:
Քայց այդ բոլոր մրցումները դիմնաղիաներում թոյլ չէին տալիս.
մուշտակուիւն ու պանկրատիոնը յատկապէս այն պատճառաւ,
որ վտանգաւոր էին մարմնակաղմի առողջութեան և ողջ մնա-
լու վերաբերմամբ: Սակայն դիմնաղիաներում ու պալեստրանե-
րում դործադրուում էին մարմնամարզական մի քանի այլ խաղեր:
Այսպէս օրինակ, կանգնեցնում էին մի մարդաշալի ունւն, նորա
գլխովը ձգում էին թուի, հակառակորդներեց մէկը առնելով իւր
ուռի վերայ թուի մի ծայրը՝ բոլոր ուժով աշխատում էր քաշել,
քարձրացնել իւր հակառակորդին, որ բռնած ունէր թուի միւս
ծայրը: Յոյն երեգատարդները վարժուում էին և, այսպէս ասած՝
պարկակուիւ տալով: Այդ բանի համար դիմնաղիայում կար մինչև
անգամ յատուկ դահլիճ: Այստեղ առաստաղից կախում էին մի
պարի, և այնքան ցածր, որ հաւատար դար խաղացողի փորի հետ:
Պարիւր լցնում էին կամ աւազով (աւելի ուժեղների համար), կամ
թուղի սերմով, կամ ալիւրով (աւելի թուլերի համար): Խաղացո-

ղը երկու ձեռքով ճօճում էր և ապա ճարպկութեամբ յետ էր մղում իրանից պարկը ձեռքերով կամ կրծքով։ Մարմնամարդութեան այդ բոլոր տեսակները սովորեցնելու համար պալեստրաներում կային առանձին ուսուցիչներ, որոնցից γυμνασται (զիմնաստայ) կոչուածները՝ լաւ դարգացած, առողջապահութեան կանոնների (διότρηκα) և մասամբ էլ բժշկութեան ծանօթ անձինք, հետևում էին և առհասարակ հսկում, որ մարմնամարդական վարժութիւնները կանոնաւոր և համաչափ լինին, և ծանօթացնում էին աշակերտներին այդ վարժութիւնների դիտական և տեսական կողմերի հետ։ Իսկ դոցա օգնականները— παιδορίβαι (պայդօրիբայ) — սովորեցնում էին երիտասարդներին այդ վարժութիւնների դանդան տեսակները։ Ինչ վերաբերում է զիմնադիւաններին, այստեղ արդէն ուսուցիչներ չկային, որովհետեւ երիտասարդներն իրանք իրանց էին վարժւում, կային միայն վերահացուներ— σαρρονισται, (սաֆրոնիստայ) որոնք գտնւում էին որոշ աստիճանաւորների— զիմնադիւարիսների իշխանութեան տակ։ Պալեստրայի գասընթացքն սկսւում էր 10 տարեկան հասակից և տևում մինչև 16 տարեկան հասակը, և բաժանւում էր երեք հասակի, իսկ զիմնադիւաններում երիտասարդները վարժւում էին սովորաբար մինչև 20 տարեկան հասակը։ Յոյները շատ էին սիրում հասարակական խաղերը, որոնց համար առաջուց պատրաստութիւններ էր տեսնում ամբողջ երկիրը։ Այդ խաղերից ամենայայտնիներն էին Պիւթէայինը՝ Իոտմէայինը և Նեմէայինը։ Սակայն դոցանից ոչ մէկն այնքան հռչակուած չէր, որքան Ոլիմպիական խաղերը, որոնց համար մեծատ յոյները մինչև անգամ իրենց տարեթիւն էին հաշւում (սկսած 776 թ. Ք. առ)։ Գերազանց դուրս գալ այդ խաղերում պարգև ստանալ՝ ձիթենի պսակ, — յոյն համար համարւում էր ամենամեծ բազմաւորութիւն, որին մարդ կարող էր հասնել աշխարհում։ Մի գեղեցիկ օրինակ է այդ մասին հետևեալ դէպքը, որ պատմում են Հռոդոսցի Գիադորասի վերաբերմամբ։— Սա միջանի անգամ գերազանցել էր հասարակական խաղերի մէջ, վերջը, երբ ծերացաւ, դարձեալ վերջացած չէր համարում իւր դերը և մի անգամ ևս եկաւ մասնակցելու հասարակական խաղերին, բայց այժմ արդէն ոչ թէ միայնակ, այլ հետը բերելով իւր երկու երիտասարդ և ծաղկավիթիթ որդւոց։ Եւ ահա, երբ երեքն էլ մրցութիւնից յաղթող դուրս եկան, բերկրութեամբ լի և ձիթենու ոստերով պսակուած երիտասարդները ուսերի վերայ առան իրենց նոյնպէս պսակուած, հօրը և տանում էին նորան հասարակաց ժողովարանը, իսկ ժողովուրդը ձայն էր տալիս բաղդաւոր հօրը.— Երկար ապրեցիր, Գիադորաս, և միթէ դեռ չե՞ս կամենում Ոլիմպոս ամբառնալ։ Ահա թէ որքան բազ

ձրը էին գնահատում յոյները մարդու Ֆիզիքական զարգացումը։
 Եւ նոցա այդ հայեացքի իրաւացիութիւնը կատարելապէս հաս-
 տատուում էր նոցա պատմութեան բոլոր փաստերով։ Աշխար-
 հում ոչ մի ազդ չտուեց մարդկութեանն այնպիսի՝ փիլիսոփա-
 ներ, բանաստեղծներ, արուեստագէտներ, հռետորներ և մատե-
 մատիկոսներ, որպէս Յունաց ազգը։ Յոյն մարդու կանոնաւոր
 զարգացած մարմնական կազմուածքը դարձաւ նոյնպէս զարգա-
 ցած հոգեկան կազմուածքի ամենալաւ միջավայրը և Ֆիզիքական
 ու բարոյական ներդաշնակ դուգաւորութիւնից ծնուեց այն հան-
 ճարը, որի շնորհիւ Յունաստանն առաջին տեղը բռնեց մարդկու-
 թեան քաղաքակրթութեան պատմութեան մէջ ու յաւիտեանս
 կմնայ մարդկութեան համար արժանի բարձր յարգանաց և օրի-
 նակելի։ Յունական կրթութեան ուղղութիւնը մի բանում միայն
 շեղուելով իւր հետեւողականութիւնից թերութիւն ունի.—մեր
 խօսքը կնոջ ֆիզիքական կրթութեան մասին է։ Սակայն այդ թե-
 րութիւնը վերաբերում է միմիայն Ատտիկայի կանանց կրթութեա-
 նը։ Ինչ բերաբերում է Սպարտային, այնտեղ ընդհակառակը,
 կանայք միանգամայն հաւասարուած էին տղամարդկանց։ Էին
 Սպարտան լուրջ ուշադրութիւն դարձնելով կնոջ վերայ, նախ
 քան ամէնը որպէս մի մարդու, որ ընդունակ է նոյնպէս զար-
 գանալու, ինչպէս տղամարդը, սպարտացուն յատուկ շիտակու-
 թեամբ վճռում էր այդ կէտից ծագող մնացեալ բոլոր այն հար-
 ցերը, որոնք ի նախատինս մեր, մինչև այսօր էլ դեռ վիճաբանու-
 թեւն նիւթ են մեղնում։ Ինչ վերաբերում է կնոջ մասնաւորա-
 պէս ֆիզիքական զարգացմանը, Քսենոֆոնտը պատմում է սպար-
 տացւոց յայտնի օրէնստու Լիկուրգոսի մասին (IX. գ. Բ. առ.), որ
 նա «թէ կնոջ և թէ տղամարդու համար սահմանեց միևնոյն չափը
 մարմնամարդութեան և վազելով կամ ուժով մրցելու մեջ»։ Սո-
 ցանից պարզ երևում է՝ որ Սպարտայում աղջկերքն էլ պէտք է
 պարապէին նոյն մարմնամարզական վարժութիւններով, որոնցով
 պարապում էին տղայքը։ Եւ ճշմարիտ որ, թէև սպարտացւոց մարմ-
 նամարզական խաղերի մասին քիչ բան է մեզ յայտնի, բայց այ-
 նուամենայնիւ եղած տեղեկութիւններից երևում է, որ աղջկերքն
 էլ տղայոց պէս պարապում էին մարմնամարզական զանազան
 տեսակ վարժութիւններով, որպիսիք էին՝ վազել, ցատկել,
 ցատկըտել (ուր իւրաքանչիւր ցատկելու ժամանակ ոտները ծընկ-
 ներից ծալում էին և իրար զարկում), շրջանակ նետել, տէգ-
 սարձակել, ըրչամարտել և այլն. և այդ բոլոր վարժութիւնները
 կատարում էին ոչ թէ որ և է խեղդուկ սենեակում. հեռու մարդ-
 կանց տեսութիւնից, այլ ըստ մեծի մասին բացօդեայ, այրող ա-
 րեգակի տակ և տղայոց մասնակցութեամբ։ Առհասարակ սպար-

տացի տղայքն ու աղջկերքը ինչպէս մեծանում, նոյնպէս էլ կըրթւում էին՝ ըստ մեծի մասին միասին: Բարքերի սուրբ պարզութիւնը թոյլատրում էր աղաների և աղջկերանց մէջ ամենաազատ վերաբերմունք, մարմնամարդտկան վարժութիւնների ժամանակ կիսամերկ էին լինում նոքա. իսկ հանդիսաւոր արարողութիւնների ժամանակ երիտասարդներն ու աղջկերքը ընթանում էին համարեա ընդունակ մերկ և երգեր երգելով զուարճանում էին տօնական խաղերով ու պարերով (գեօնդ): Պլուտարքոսն ասում է թէ՝ «տղայքը, ինչպէս և աղջկերքը, յայտնի հանդիսաւոր դէպքերին դուրս էին գալիս մերկ և երգում ու պարում խըմբուած երիտասարդների աչքի առաջ, և այդ բանը երբէք անպատշաճ, անվայել չէր թւում սպարտացւոց. որովհետև այդպիսի դէպքերում պահպանւում էր խիստ ողջախոհութիւն և ցրւում ամենայն վաւաշոտ մտածմունք: Այդպէս անելու նպատակն այն էր, որ այդ միջոցով աղջկերքը դառնում էին համեստ և զգաստ իրենց վարմունքների մէջ, վարժւում էին պատշաճաւոր և վայելուչ ընդունելութեանց ձևերի, և իւրացնում ազնիւ մտածութիւնը. որովհետև նոքա էլ իրաւունք ունէին մասնակցել մըրցութեան գերազանց գտնուել ու գնահատուել»:

Երբ առաջ եկաւ Հռոմը և զարգացաւ նորանում քաղաքացիութիւնն ու քաղաքակրթութիւնը, այնտեղ էլ պետութիւնն ուշադրութիւն դարձրեց երիտասարդութեան ֆիզիքական զարգացման վերայ: Սակայն նեղ գործնականութիւնը, որ կաղմում էր հռոմայեցւոց բնաւորութեան էական գիծը, ղգալի եղաւ կրթութեան նպատակի մասին նոցա ունեցած հայեացքի վերայ և ու նոցա մէջ կրթութեան նպատակը ո՛չ թէ այն էր, որ մարդու ֆիզիքական ոյժերը հոգեկան ոյժերի հետ շաղկապուած, ներդաշնակ կերպով դարգացնէին և դորանով հասնէին գեղեցկութեան իդէալին, որպէս յոյներն էին անում, ո՛չ, այլ միմիայն՝ նախապատրաստել լրումն տալու այն բոլոր օգտակար—գործնական խըմբիւններին, որոնք պահանջւում էին հռոմայեցւոց՝ որպէս հռոմէական պետութեան անդամից, ղխաւորապէս հայրենիքին ղինուածական ծառայութիւն անելու համար: Դորա համար էլ հռոմէացւոց մէջ մարմնամարդութիւնը չունէր երբէք այն յարգանքը, որպէս յունաց մէջ էր, իսկ մարմնամարդական վարժութիւնները կանանց համար միանգամայն անպատշաճ և անվայել էին համարւում: Հռոմայեցի երիտասարդը փոքր հասակից ոկսած պարտաւոր էր սովորել ձի և կռք վարելը, կատարելապէս վարժուել տէգով և նիզակով որսալուն, և առհասարակ՝ լինել ղինուոր: Հռոմայեցի երեսանների կրթութեան այդպիսի ղինուորական բնաւորու-

թիւնն զգալի է լինում մինչև անգամ նոցա խաղերի մէջ, որոնք կրում էին իրենց վերայ ղինուորական կնիք։ Մինչև անգամ Տրոյեան խաղերը, որ ամենայն տարի մեծ կրկէսում կատարում էին անուանի Բալատրիկների որդիքը, և ուր մրցում էին ըմբշամարտութեամբ, շրջանակ նետելով, ձի քշելով, լողալով և այլն, ոչ այլ ինչ էին, եթէ ոչ զինուորական խաղեր։ Սակայն շնոյած որ Ֆիզիքական կրթութեան խնդիրն այդպիսի ճնշումների ներքոյ էր, մանկական ընաւորութիւնն իրեն համար եւք էր գտնում. մենք տեսնում ենք, որ հռովմայեցի երեխաներն ունէին մի շարք խաղեր, որոնք նման էին յունական խաղերին և նոցանից էլ փոխ էին առնուած։ Օրինակ, հռովմայեցի երեխաները, նման իրենց յոյն հասակակիցների, խաղում էին անակներ շինելով, սայլակ կամ փայտէ ձի հեծած, խաղում էին խրճիկ, քար, հոլ, շրջան, և այլն։ Աւելի մեծերն արդէն չէին բաւականանում այդ հասարակ զուարճութիւններով և խաղում էին՝ Թագաւոր, դատաւոր, զօրք — զօրապետ։ Բայց նոցա համար ամենից սիրելին ընկոյզ խաղալն էր։ Այն աստիճան տարածուած, ընդհանրացած էր այդ խաղը հռովմայեցի երեխաների մէջ, որ համարւում էր մանկութեան էմբլեմա, այնպէս որ «nuces reliquere» — բաժանուել ընկուղից — արտայայտութիւնը հռովմայեցւոց մէջ նոյն նշանակութիւնն ունէր, ինչ որ մեզնում՝ «բաժանուել վէգիլ»։ Ընկոյզի խաղն ունէր շատ տեսակներ. օրինակ, տոնում էին երեք ընկոյզ և աշխատում էին նոցա վերայ գնել չորրորդը, այնպէս որ չքանդուին առաջինները, և որին յաջողուէր այդ քանը, նա տանում էր չորսն էլ։ Վամ՝ որ և է թեք տեղում շարում էին վերից վար մի քանի ընկոյզ, ապա մի հատ վերեւից գլորում, և աշխատում էին այնպէս գլորել, որ հանդիպի շարանի վերջին ընկոյզին։ Վամ թէ չէ՝ գծում էին եռանկիւնի և նորա վերայ մի քանի զուգահեռական գծեր, ապա այդ գծերին դադաթնահայեաց ձգում էին ընկոյզներ։ Խաղի դադանիւն այն էր, որ աշխատում էին որքան կարելի է շատ ընկոյզ ձգել և այնպէս որ ձգած ընկոյզը եռանկիւնու սահմանից գուրս չգայ։ Սւ վերջապէս, փոսիկ էին փորում, կամ մի աման դնում և կաղինները բուռն առած՝ որոշ հեռաւորութիւնից, աշխատում էին ձգել փոսը կամ ամանը, որպէս անում էին և յոյները։ Բացի ընկոյզը խաղում էին նաև փող, գործադրելով աստ — դրամը՝ զոյգ — կէնդ, գուշակել թէ բռան մէջ քանի հատ կայ որ և է իր, և այլն։ Աւելի հասուն երիտասարդները գոցանով էլ չէին բաւականանում և զբաղւում էին այնպիսի խաղերով, ուր պահանջւում էին մարմնամարզութեան յատուկ գործիքներ։ Խաղերի այդպիսի տեսակն էին օրինակ՝ վաղել մեծ ծանրութիւն վերցրած, ցատկել հեռու կամ վեր, ուր

աւելի յարմարութեան և հեշտութեան համար վերցնում էին առանձին տեսակի հաւասարակշռող ձողեր (լանգեառ), սուսերամարտութեան վարժութիւններ զանգեղեմներով (гагтеле), ինչպէս և այժմ են անում. ըմբշամարտութիւն, շրջանակ նետել, տէգարձակել, փորձնական մենամարտութիւն գետին անկաժ սիւնի հետ՝ որի գէժ կռուում էին, որպէս կենդանի հակառակորդի հետ, ծանր վահանով և փայտեայ սրով զինուած, սուսերամարտութիւն փայտեայ գաւազաններով՝ փոխանակ սրերի, ձի հեծնել, լող տալ ևլն. Ինչ վերաբերում է զննականներին՝ զործադրում էին միայն հասակաւորները, որոնց շատ սիրելի էր հռովմայեցւոց այդ խաղը: Կատոն Աւագը, խիստ սրնախֆեքս* Սկևռլան, Օդոստոս և Աղէքսանդր Սեւերոս կայսրները շատ էին սիրում այդ խաղը: Գնտակները շինում էին կաշուից և լինում էին մի գոյնի (կանաչ, կապոյտ և այլն), կամ թէ չէ՝ գոյնզգոյն նկարներով նախշած (pilae, pictae), լցնում էին բրդով, ըմբուլով և այլն: Գնտակները լինում էին զանազան մեծութեան՝ փոքր (pilae), միջակ՝ լցուած ըմբուլով (paganicae—գեղջիկական) և մեծ՝ լցուած օդով (folles). զննականներով զանազան տեսակ խաղեր էին անում: Ամենահասարակ տեսակն այն էր, որ մէկը ձգում էր վերև կամ հեռու, իսկ միւսը բռնում և յետ էր տալիս, այդ խաղը կոչւում էր datatim ludere—յետ տալէն: Այդպէս խաղում էին և երեք հոգի, որ կանգնում էին եռանկիւնի կազմած (pila trigonalis), և գնտակն անցնում էր յաջորդաբար մէկից միւսը—1-ից՝ 2-րդը, 2-ից—3-րդը, 3-ից—կրկին 1-ը, և այդպէս շարունակաբար, զործում էին երկու ձեռքով էլ՝ մէկով բռնում գնտակը, միւսով տալիս: Երբեմն խաղացողը բռնեցքով կամ արմունկով մի քանի անգամ թռցնում, խաղացնում էր գնտակն օդի մէջ և այնպէս տալիս (expulsum ludere): Վերջապէս կար այլ ևս մի տեսակ խաղ—raptim կամ harpastum—ուր խլում էին գնտակն իրար ձեռքից. դուրս համար կանգնում էին մի քանի հոգի, վերև էին ձգում գնտակները, և ապա իւրաքանչիւրը պէտք է բռնէր մի գնտակ՝ աշխատելով խլել այն հակառակորդի ձեռքից: Այդ բոլոր խաղերն ունէին գլխաւորապէս առողջապահական նպատակ, և այդ պատճառաւ էլ կատարւում էին սովորաբար բաղանիքներում լողանալուց առաջ: Պէտք է ասած, որ մարմնամարզական խաղերի համար առանձին շինութիւններ չկային Հռովմում, որպէս յունական գիմնազիականներն էին, այլ սովորաբար կատարւում էին բաղանիքներում, ուր այդ քանի

* Հին Հռովմում կրօնական գործերի համար փութերից կազմուած քառասուն անասնի անդամ: Ծ. Թ.

համար կային առանձին բաժանմունքներ, որ կոչւում էին սփերիստերիա. թէև հարուստ պատրիկները իրենց, քաղաքից դուրս ունեցած՝ տներում շինուով էին այդպիսի փերիստերիաներ, և սուվորաբար այնտեղ էին ղուարձանում նոցա երեսմաները:

Ահա այդպէս էին հին դարերի մանկական և մարմնամարդական խաղերը: Ինչպէս տեսանք, այն հայեացքը, որով առաջնորդւում էին հները՝ տալով խաղերին առաջնակարգ տեղ երիտասարդութիւնը կրթելու գործում, էր այն, թէ միմիայն in corpore sano—mens sana: Թէ ինչ հետեանքների էին հասնում նորա շնորհիւ այդ բանի, ամէնքս գիտենք: Հին աշխարհը մեղ ամենից աւելի զարմացնում է իւր այն հրաշալի ներդաշնակութեամբ, որ կար նորա իդէալական աշխարհի և բէալական աշխարհի մէջ՝ նորա մարմնական և հոգեկան կեանքի մէջ: Հին աշխարհը, տալով մարդկութեանը Համբերոս և Սոկրատէս, յիշատակ թողեց նորա համար նաև Ապոլլոնի ու Ալեներայի արձանները՝ իբրև պերճախօս վիաներ այն սկզբունքների, որոնցով ղեկավարւում էր նա իւր պատմական կեանքում: Միջին դարերի սկզբից ի վեր, երբ ընկաւ դասական աշխարհն իւր ատուածներով, կիսատուածներով և հերոսներով մէկ տեղ՝ ընկաւ նա և այն բոլորը, ինչ որ կապուած էր նորա հետ, ինչ որ արտադրութիւն էր նորա ընդհանուր ուղղութեան: Քրիստոնեայ հոգևորականութիւնն սկսեց այն ժամանակ հալածել այն ամէնը, ինչ որ քիչ թէ շատ յիշեցնում էր նախնի ժամանակները, կուսակաշտական ծէսերն ու սովորութիւնները. վերջինների հետ միասին հալածանքի ենթարկուեցան և հասարակական մարմնամարդական խաղերը: Դոցա ոչնչացմանը շատ էր նպաստում նոյնպէս միջին դարերում խիստ ընդհանրացած նոր հայեացքը, որը մարմինն համարում էր ոչ թէ հոգւոյ զգայարան, այլ հոգւոյ բանտ ու շղթայ, և, ի հետեանս այդ հայեացքի՝ ֆիզիքական զարդացման վերայ ունեցած հոգացողութիւնը համարւում էր նշան հեշտասիրութեան: Այնուհետև, այդ ժամանակներում երեսմաների կրթութիւնը յանձնուեցաւ վանականների հոգացողութեանը և տեղի էր ունենում վանքերում: Բնական է, որ այդպիսի պայմանների մէջ ամենայն մի խաղ և մարմնամարդական վարժութիւն պէտք է միանգամայն կարճէին իրենց գոյութիւնը. նոցա փոխարինեցին դանակոծութիւնը, կերակրի զրկանք, նախատական սիւն, և այլն*: Երբեմն միայն, արտաքոյ կարգի դէպքերում, մէկ մէկ թոյլ էին

* Տես Արարատ, 1895 թ. դեկտ. — Դանակոծութիւնը եւ այլ մարմնական պատժներ դպրոցական կարգապահութեան մէջ: Ե. Թ.

տալիս ուսանողներին դուրսնանալ. և այն ժամանակ, այդ հազարագլուտ ուրախութեան օրերում, նորից մէջտեղ էին գալիս վաղուց մոռացուած վէպը, պառտաւին ու շրջանը, և այլն. սկսուում էին՝ հարձակուիլեայ, պարսն—պարսն, լաթախ և այլ խաղեր, ցափկւում էին մի ոտքի վերայ (դիւ, ընդի, չդիւ), գլուխ—կոնծի էին տալիս, գլորւում էին։ Այդպիսի ժամանակներում աւսանողներն առաջուց խօսք էին առնում ու պայծառ գնում, որ իրենց վերահացունքը լինեն համբ ու կոյր, որպէս խլուրդն է, և ուսուցիչներն այնչափ ցնորուած, որ երեւակայեին քէ վերացած են Յիսեան դաշտերը*։ Սակայն, ի հարկէ, այդ օրինակ դէպքերը չէին կարող շեղել կրթութեան ընդհանուր ուղղութիւնը, որ մնում էր միշտ միևնոյնը և շարունակում էր ծանրանալ ամբողջ Եւրոպայի կրթական գործի վերայ։ Ասպետականութիւնն ևս, որ՝ դոնէ ըստ երևոյթին, մի կենդանի ընդդիմադիր ոյժ էր այն ժամանակուայ կրօնական—ճգնական ուղղութեան դէմ, անկարող էր փոխել այդ ուղղութիւնը։ Եօթն արուեստները, որ պարտաւոր էր իմանալ

* Հայերիս մէջ այդպիսի դէպքերն ասուում էին մօնրաբող, որ լինում էր գլխաւորապէս քահկէնդաններին։ Այդ ժամանակ խալֆաներն, ուսաններն ու վարպէտները մասնորէ արանֆովն էին հայում իրենց մեծ էւ փոքր (մօնրերի, աւկերների) կատարած խաղերին և շարժմանը. խաղում էին հոյ, վիգ, լախի, գնակ, մուշ, ընկոյզ, կաղին՝ զոյգ-կենց կամ այլ տակ. մարմնամարզական խաղերից՝ արտուրմայ, երկէն եռ, դայմասուն և այլն. զուարճութիւններից՝ խան, խօսա-գետիկ և այլն. վերջիններս կատարում էին գլխաւորապէս հասակաւորները։ Մասաղ սերունդի խաղերն ու զուարճութիւններն ազդում էին և երիտասարդների ու ծերերի վերայ. և սոքա էլ, առանց ամայելու իրենց հասակից ու տարիից, կրկնում էին իրենց վաղուց քողած, մոռացած մանկութեան խաղն ու խիւղը, և խառնուած երեխաներին՝ զուարճանում էին մոտա հնէ, խաղում որպէս մեծ-մեծ երեխաներ. և այդ խիստ զուարճացնում էր մասնակցող և հանդիսատես մեծ ու փոքր երկսեռ հասարակութեանը։ Խիստ դաժան խալֆաներն ու վարպէտ-ուսաններն էլ, մոռացած իրենց դիրքն ու իշխանութիւնը, մասնակցում էին ընդհանուր ուրախութեանը. բացում անհետանում էին մոտա դէմք՝ մեծերին պատկառանք, իսկ փոքրերին սարսափ ազդող կնճիռները։ Այդ տեղի էր խախտւում, ոգևորութիւն առաջ բերում, և ոգևորութիւնը, պատանում էր, այնչեղն էր հասնում, որ վարպէտները ամենայն հնազանդութեամբ կատարում էին աշակերտների պատուերները, իսկ անարկու խալֆայն, փառաւորապէս զետիկ գլորում և ոտները պիկդ քոնում իմաստութեան նախադուռն Գալախկայի մէջ՝ իւր մօնրերի առաջ ինքը մոնր էր դառնում։

իւրօքանչիւր ասպետ, հետեւեալներն էին. ձիավարել, լողալ, նետ-աղեղ գործադրել, սուսերամարտութիւն և որսորդական արհեստը. (մնացեալ երկուսն էին՝ շախմատ խաղալն և բանաստեղծութիւնը): Այգպիսի սկզբունքների շնորհիւ ասպետական դասի մէջ ֆիզիքական կրթութիւնը պէտք է քաջալերուէր, և իսկապէս՝ մասամբ քաջալերուած, խրախուռում էր այն հինց մանկական հասակից սկսած, սկզբում խաղերի ձևով: Այնուամենայնիւ այդ ժամանակուայ ոգին, ընդհանուր ուղղութիւնը, հայեացքները հնարաւորութիւն չէին տալիս զարգացնելու այն լաւ աղդեցութիւնը, որպիսին այդ դէպքում կարող էր ունենալ ասպետականութիւնը: Գործն այդպէս շարունակուած էր և նոր դարերում: Թէև ներկայնիւ թի մասին շատ քիչ տեղեկութիւններ ունինք, ոսկայն հիմնուած երկու երեք պատահական տեղեկութիւնների վերայ՝ կարելի է ասել, որ Եւրոպայի մի քանի երկրներում մարմնամարզական խաղերն էլի մասամբ արժանանում էին ուշադրութեան և յարգում: Այդ կարելի է ասել, օրինակ, Իտալիայի, Գերմանիայի մի քանի տեղերի և մասամբ էլ Ֆրանսիայի համար: Սլաւոնների մէջ, թւում է թէ՛ Ուկրաինցիները միւսներից աւելի էին պահպանել սէր դէպի մարմնամարզական խաղերը, այստեղ մինչև այսօր էլ պատահում են խաղեր, որ շատ նման են Ուկրաինական խաղերին: Մարմնամարզական խաղեր սիրում են և Կովկասեան աղդերը, մանաւանդ Վրացիք: Սակայն, կրկնում ենք, որ ըստ այդ առանձնակի երևոյթներն անկարող էին որ և է աղդեցութիւն ունենալ կրթական ընդհանուր ուղղութեան վերայ, և այդ ուղղութիւնը իւր ծրագրից միանգամայն դուրս հանելով մատաղ սերնդի ֆիզիքական զարգացման խնդիրը, պահել էր լոկ գիտութիւնների ուսուցումն՝ ուսուցումն, որ մեռած էր, ռքօլաստիքական և զուրկ ամենայն մի կենդանութիւնից: Եւ ահա, երբ այդ ուղղութիւնն սկսեց վերջապէս տալ այն ողբալի հետեւանքները, որոնց մասին սոյն տեսութեան սկզբում խօսեցինք, այդ ժամանակ միայն ստիպեց ամէնքին ծանր մտածմանց մէջ ընկնել: Սկսեցին մտածել թէ՛ անհրաժեշտ է վերստին դիմել անցած դարերի գործնական վարժութիւններին: Առաջին սկսողներն եղան Ազլօ—Սակսոնական աղդերը, և ներկայումս Անգլիան և Ամերիկան այդ նկատմամբ թէև չեն հաւաստարուել Հին—Յունաստանին, բայց բաւական մօտեցել են նորա ունեցած իդէալին: Յիշեալ երկրների դպրոցներում մարմնամարզութիւնը առաջնակարգ առարկաներից մէկն է համարուում: Ամերիկայում դպրոցներին կից շինութիւններն ու պարտէզները, որոնք սահմանուած են մարմնամար-

դական վարժութիւնների համար, զարմանք են պատճառում իրենց ճոխութեամբ: Անգլիայում բոլոր քաղաքներն, առանց բացառութեան, ունին հրապարակներ, որոնք նշանակուած են հասարակական խաղերի համար: Իսկ հասարակական խաղերն Անգլիայում ամենայն աեղ անհրաժեշտութեան չափ սովորական են: Գնտակ են խաղում և՛ ձերերը և՛ փոքրերը. ձի են հեծնում, նրօհետ խաղում և՛ տղամարդիկ և՛ կանայք: Ամենաախանաւոր պետական անձինք իսկ յետ չեն մնում հասարակ մահկանացուներից: Յայտնի է, որ Գլադստոնը կացին բանացնելում նոյնքան վարժ և վարպետ էր, որքան գրիչ շարժելում. 1885 թ. ին նա իւր որդու հետ կտրեց ու կտրատեց մի ահագին կաղնի, և այնպէս արագ կերպով ու մաքուր, ինչպէս կարող էր անել միմիայն վարպետ փայտահատը: Շնորհիւ դորան՝ ոչ մի ժողովուրդ այնպէս յայտնի չէ իւր ֆիզիքական ուժերի ամբողջեամբ և հոգեկան ուժերի նոյնպիսի բեղմնաւորութեամբ, որպէս Անգլիացիք: Անգլիային և Ամերիկային հետևեցին և այլ պետութիւններ: Գերմանիայում մարմնամարզութեան վերածնութիւնն սկսեց 60-ական թուականներին: Բիսմարկը, որ շատ էր սիրում ամենայն տեսակ մարմնամարզական խաղեր, և Մօլտկէն, որ այն ժամանակ Քրանսիացւոց հետ պատերազմելու ծրագիրն էր մշակում՝ շատ նպաստեցին երկրում մարմնամարզական ընկերութիւններ (տուրնֆերայն) հիմնելուն, և ներկայումս այդպիսի ընկերութեանց անգամները թիւը հասնում է մի քանի հարիւր հազարների: Աինյայտնի ֆիզիքական այլասեռումն, որ սպառնում էր ոչնչացնել ժողովուրդը, տարսափեցրեց Քրանսիացւոց, և նոքա այդ աղղեցութեան տակ վերսկսեցին մարմնամարզական խաղերը: Իտալիայում, շնորհիւ Օրեմանի, մարմնամարզական խաղերը գործադրուել սկսան 60-ական թուականների վերջերին: Զի կարելի չուէր, վերջապէս, Աենգրիտի մառին, ուր մարմնամարզութեան ուսուցումը դրուած է նոյնպիսի հաստատուն հիմքերի վերայ, որպէս այլ առարկաների ուսուցումը, և մարմնամարզութեան ուսուցիչներն էլ ստանում են նոյնքան ռոճիկ ու նոյնպիսի կենսաթաշակ, որպէս միւս առարկաների ուսուցիչները: Աերջերս Ռուսաստանում էլ սկսեցին նոյնը դործադրել: Սակայն այստեղ կարճես մարմնամարզութիւնը ինչ որ տիկնախաղ լինի: Աշակերտները շարք են կանգնում որպէս զինուորներ, յետ ու առաջ են քայլում, աջ ու ձախ դառնում, խմբուում—զօրասիւններ կազմում և ցրում, և այլն: Ինչ ասել կուզէ, որ այդպիսի տիկնախաղ դարձած մարմնամարզութիւնը միանգամայն անօգուտ է: Ինչ վերաբերում է ռուս հասարակութեան, նա այդ հարցի վերայ նայում է խիստ անտարբեր կերպով, Թէև Ռուսաստանի մի

քանի քաղաքներում մասնաւոր անձանց կամ հիմնադրութիւնների նախաձեռնութեամբ սկսել են հիմնել մանկական պարտէզներ՝ յատկապէս մանկանց ֆիզիքապէս կրթելու համար, սակայն այդ բոլոր պարտէզների թոյլ կողմն այն է, որ նոցանով օգտուել կարող են միմիայն հարուստ ծնողների որդիք։ Պետերբուրգում վերջին ժամանակներս թէև հիմնեցին մի պարտէզ, ուր երեխաբերն ընդունուած են շատ աննշան վճարով, երբեմն էլ ձրի, քայքայե պարտէզը հիմնուած է Ֆրէօքելի սիստեմով և կառավարւում է Ֆրէօքելեան ընկերութեան միջոցներով։ Իսկ Ֆրէօքելեան սիստեմը վաղուց արդէն անպէտք և աննպատակայարմար է ճանաչուած, շնորհիւ այն հանգամանքի, որ այստեղ շարունակ խառնուած են երեխաների ներքին կեանքի և խաղերի մէջ և ձանձրոյթ պատճառուած, և երեխաները դառնում են ինչպէս անկենդան խրճիկներ, որոնց այս ու այն կողմն են շուռ տալիս խաղացնում։ Արեւմտքում այդ սիստեմը վաղուց արդէն թողել են։ Այս մասում Ռուսաստանի մէջ միակ հաճելի բացառութիւնը կազմում է Վիելը։ 90-ական թուականների սկզբներում այդտեղ փորձեցին սարքել այնպիսի խաղեր, որոնք մատչելի լինեն բոլոր երեխաներին։ Տեղ ընտրեցին ս. Վլադիմիրի արձանի մօտի հրապարակը, և շատ գեղեցիկ հետեանքների հասան, մի քանի հազար երեխաներ էին ժողովուում այնտեղ խաղալու, և բոլոր ծնողները միաձայն վկայում էին այն օգտի մասին, որ նոցա երեխաներն ստանում էին այդ խաղերից՝ իրենց առողջութեան վերաբերմամբ։ Վերջերս վճռեցին աւելի ընդարձակ չափերի հասցնել այդ խաղերը, և այդ նպատակաւ Պեչորսկում ընտրեցին մի տեղ, ուր բացւում էին աչքի առաջ հրաշալի տեսարաններ Դնեպրի վերայ և դէպի Անդը—Դնեպրեան հարթավայրերը, այդտեղ տնկեցին մի պարտէզ, որի մի մասը յատկացրած է մանկական խաղերի համար։ Խաղերի համար այդտեղ ամեն տեսակ յարմարութիւններ կան, ձողեր և հաստ պաքաններ, կայսեր ու սանդուղքներ, մագըլցելու նպատակով բարձր բերդ, ոտների տակ դողացող, անհատատ գերաններ, որոնց վերայ շրջում են երեխաները, բլրակներ՝ սայլակներով շրջելու, խաղալու և դէպի վեր վազելու համար, տրամպլին՝ ցատկելու համար, ճլրթիկներ, հսկայական քայլեր, կեղիկներ և այլն, և այլն՝ անվերջ։ Ամենայն օր, մանաւանդ ճաշից յետոյ, այնտեղ են ժողովուում անթիւ երեխաներ—տղայ թէ աղջիկ, հարուստ թէ աղքատ՝ համախմբւում, կազմում են համախորհուրդ և բաւական պատկառելի մի ընտանիք։ Այնտեղ են ժողովուում և հասակաւորներից շատերը նայելու, զուարճանալու։ Մանկական խաղերը նոցա վերայ էլ ազդում են և, այնպէս վաւարիկ կերպով, որ շատ անգամ՝ մէկ էլ տեսնես քաջամար-

մին մարդու մէկը, չկարողանալով զոպել իրեն, դուրս պրծաւ տեղից, վազեց դէպի հսկայական քայլերը, և դժուարութեամբ տեղաւորուելով պարանի ծայրին՝ սկսեց ճիգ թափելով ցակրտել, թռչել սենի շուրջը, որ քիչ զուարճութիւն չէ պատճառում հասուն ու մատաղ հասարակութեանը: Մնում է միայն ցանկալ, որ միւս քաղաքներն էլ հեռեն այդ դեղեցիկ օրինակին, զի՝ in corpore sano—mens sana

Թարգմ. Մարկոս Բահ. Տէր-Մկրտչեան.



ՄԱՐՏԻՆԻԿԱ ԿԴՋՈՒ ԱՂԷՏԸ ԵՒ ՀՐԱԲԽԱՅԻՆ ԵՐԵՒՈՅԹ-
ՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.

Մայիսի 8-ին, նոր տոմարով, Մարտինիկա կղզու վրայ սարսափելի աղէտ պատահեց, որ անթիւ գոհեր տարաւ. Աէն-Պիէր քաղաքը կործանուեց ձաղատ լերան ժայթքումից: Մի քանի բոլէի մէջ ծաղկած, քաղաքակրթութեան բոլոր բարիքները վայելող քաղաքը աւերակների կոյտ դարձաւ, որոնց տակ մնացին 40,000-ի չափ այլանդակուած, անշնչացած դիակներ: Այս դժբաղդութիւնը, որի առաջ նսեմանում է Պօմպէա և Հերքուլանում քաղաքները ոչնչացնող պատմական աղէտը, առաջացնելով մեր մէջ սարսափի զգացում և լցնելով մեր հոգին կարեկցութեամբ դէպի դժբաղդ կղզու թշուառ մնացած բնակիչները, որոնք ոչ միայն ապրելու միջոցներից զուրկ են, այլ և մշտական երկիւղի տակ՝ մի գուցէ Ա. Պիէրի բնակիչների վիճակին ենթարկուին, ակամայ տըխուր ենթադրութիւնների տեղիք է տալիս և մեր անօղնական վիճակը պարզում:

Նոյն իսկ սովորական երկրաշարժի ժամանակ, երբ երկիրը, որի կայունութեան մասին կասկած չէինք կարող ունենալ, յանկարծ սկսում է մեր ոտների տակ տատանուիլ, երբ մեր ապաստարան եղող աները քանդւում են և մենք